Համաձայնագիր N 1
09.02.2012թ. կնքված <<ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ>>
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀ ՔՆ ԾՁԲ – N 12/4

ք. Գյումրի <14> փետրվարի երկուհազար 2014թ.

<Ստանդարտների Ազգային Ինստիտուտ> ՓԲԸ (ք. Երևան, Կոմիտասի պող. 49/2) այսուհետ՝ <Վարձատու>, որի անունից համաձայն ընկերության տնօրենի կողմից 12.02.2014թ. տրված N ԵԱ-38 լիազորագրի հիման վրա հանդես է գալիս **Արտյոմ Սարգսի Մկրտչյանը** (անձնագիր՝ AK0396866, տրված 11.11.2009թ. 016-կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Վ. Սարգսյան փող., 1-ին թաղ., տուն 80), և ՀՀ Քաղաքաշինության նախարարությանը (ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական տուն 3), այսուհետ՝ <Վարձակալ>, որի անունից ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ. Խաչատրյանի 07.02.2014թ. տրված թիվ 485-14 լիազորագրի հիման վրա հանդես է գալիս ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության Գյումրու տարածքային բաժնի պետ **Ժորա Միքայելյանը** (անձնագիր՝ AM0450015, տրված 08.09.2011թ, 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Գործարանային նրբ. տուն 21 հասցեում), մյուս կողմից,ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով 09.02.2012թ. կնքված <<Ոչ բնակելի տարածքի վարձակալության>> ՀՀ ՔՆ ԾՁԲ- N 12/4 պայմանագրի /այսուհետ Պայմանագիր/ 3.6 կետը, , կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

9 փետրվար 2012թ. մեր միջև կնքված և Գյումրի նոտարական տարածքի նոտար Ռ. Մուկուչյանի կողմից հաստատված սեղանամատյան 940 <<ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ>> ՀՀ ՔՆ ԾՁԲ – N 12/4 պայմանագրում 1.3 կետում կատարել հետևյալ փոփոխությունը:

1.3 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ սույն պայմանագիրը կնքվում է մինչև 2015թ. դեկտեմբերի 30-ը: Պայմանագրի մնացած կետերը թողնել անփոփոխ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Կողմերի միջև 09.02.2012թ. կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 (չորս) օրինակից: Պայմանագրի մեկական օրինակ տրվում է Կողմերին, մեկ օրինակ՝ նոտարին, մեկ օրինակ՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանման: Վավերացված բոլոր օրինակները ունեն հավասար իրավաբանական ուժ, սակայն նոտարի վավերացրած կամ հաստատած համաձայնագրի բնօրինակը համարվում է նոտարի մոտ պահպանվող օրինակը, իսկ բնօրինակի և մյուս օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է բնօրինակին:

2.4 Սույն համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձակալ	Վարձատու
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	<Ստանդարտների Ազգային Ինստիտուտ> ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն 3	Հասցե՝ ք. Երևան, Կոմիտասի 49/2
հ/հ 900011014363	հ/հ 2471200468980000
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	<Արդշինինվեստբանկ>, Արաբկիր մ/ճ
հվհհ 02565827	հվհհ 00081133
Լիազորված անձ՝	Լիազորված անձ՝
Կ.Տ	Կ.Տ